ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/9183/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.09.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «ԷՌՎԻԷՌ Քոմֆորտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր)ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «ԷՌՎԻԷՌ Քոմֆորտ»ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջիմասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Լևոն Օհանյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ

Պատասխանողի՝ «ԷՌՎԻԷՌՔոմֆորտ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավերճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարաններկայացվել է 01.09.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/9183/02/25 քաղաքացիականգործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասությանքաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **02.09.2025 թվականին, ժամը 21:15րոպեին**, իսկ հասանելի է դարձել **03.09.2025 թվականին**:

Դատարանի 08.09.2025 թվականի որոշմամբ հայցադիմումըվերադարձվել է:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվելէ 11.09.2025 թվականին, որը **11.09.2025 թվականինմակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիականդատարանի դատավոր Ս. Երիցյանին, իսկ հասանելի է դարձել **12.09.2025 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է վերադարձման հետևյալպատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումըվարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալգնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցներըպահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելուվերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսվածժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջներըչկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկհայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողիտիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվումեն էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարությանմասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմիցիրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ**

Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլորդատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում,միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան,**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվումեն միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարականփաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀԳեղարքունիքի մարզպետարանից պետք է պահանջել «ՀՀ ԳՄ-ԳՀԱԾՁԲ-25/44» ծածկագրով գնմանգործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմողտեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդհոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԷՌՎԻԷՌ Քոմֆորտ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ «ԷՌՎԻԷՌ Քոմֆորտ»ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջիմասին, հայցադիմումն ընդունելվարույթ:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից պահանջել դատարան ներկայացնել «ՀՀ ԳՄ-ԳՀԱԾՁԲ-25/44» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակգտնվող բոլոր ապացույցներն, ընդ որում ապացույցները պետքէ ներկայացվեն **էլեկտրոնայինհամակարգի միջոցով** (**բացառությամբ**պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Գեղարքունիքիմարզպետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյաժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.09.16 17:45:35 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am